

# ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## ԿՈԼԵԳԻԱ

### ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

29 նոյեմբերի 2016 թվականի

թիվ 23

քաղ. Մոսկվա

### **Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումների մասին**

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 18-րդ եւ 45-րդ հոդվածներին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան

**հանձնարարում է** Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններին «Ինտերնետ» տեղեկատվական-հեռահաղորդակցական ցանցում՝ Եվրասիական տնտեսական միության պաշտոնական կայքում սույն Հանձնարարականի հրապարակման օրվանից՝

1. Կիրառել Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի պարզաբանումները (Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2013 թվականի մարտի 12-ի թիվ 4 հանձնարարականի հավելված)՝ հաշվի առնելով փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

2. Համաշխարհային մաքսային կազմակերպության՝ ապրանքների նկարագրման եւ ծածկագրման ներդաշնակեցված համակարգի 6-րդ

հրատարակության վրա հիմնված՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի նոր խմբագրության ընդունման կապակցությամբ 2017 թվականի հունվարի 1-ից կիրառել սույն Հանձնարարականի 1-ին կետում նշված Պարզաբանումները՝ Ապրանքային անվանացանկի տվյալ խմբագրությանը չհակասող մասով:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի  
կոլեգիայի նախագահ՝

Տ. Սարգսյան

ՀԱՎԵԼՎԱԾ

Եվրասիական տնտեսական  
հանձնաժողովի կոլեգիայի  
2016 թվականի նոյեմբերի 29-ի  
թիվ 23 հանձնարարականի

**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական  
գործունեության միասնական ապրանքային անվանացանկի  
պարզաբանումներում կատարվող**

1. 1-ին հատորում՝

1) 3 «բ» Կանոնի պարզաբանումների (X) մասի 1-ին կետի վերջին պարբերությունը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ՝ «Այն նաև կիրառելի է, օրինակ, մանրածախ վաճառքի համար ստվարաթղթե տուփի մեջ միասին բաժնեծրարված՝ ապակե բանկայով լուծվող սուրճի (ապրանքային դիրք 2101), կերամիկական բաժակի (ապրանքային դիրք 6912) եւ կերամիկական ափսեի (ապրանքային դիրք 6912) համար:».

2) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 03 խմբի պարզաբանումների ընդհանուր դրույթների երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Տվյալ խմբում ընդգրկվում են նաև ձկների սննդային ձկնկիթը եւ սերմնագեղձերը, որոնք պատրաստված չեն կամ պահածոյացված չեն, կամ պատրաստված են կամ պահածոյացված են տվյալ խմբում նախատեսված եղանակներով: Այլ եղանակներով պատրաստված կամ պահածոյացված ձկների սննդային ձկնկիթը եւ սերմնագեղձերը, կամ ձկների սննդային ձկնկիթը եւ սերմնագեղձերը, որոնք պիտանի են որպես թառափազգիների ձկնկիթ կամ թառափազգիների ձկնկիթի փոխարինիչներ սննդի մեջ անմիջական

օգտագործման համար, ընդգրկվում են **1604 ապրանքային դիրքում**»:

3) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0511 ապրանքային դիրքի պարզաբանումների մեջ՝

ա) 6 (ii) կետում «ձկների պարկեր» բառերը փոխարինել «ձկների լողափամփուշտներ» բառերով.

բ) 6-րդ կետի «ա» բացառության մեջ «ձկների պարկեր» բառերը փոխարինել «լողափամփուշտներ» բառերով.

4) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0712 ապրանքային դիրքի պարզաբանումների առաջին պարբերության մեջ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «0709» ծածկագիրը փոխարինել ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ «0711» ծածկագրով.

5) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1509 ապրանքային դիրքի պարզաբանումների մեջ Գ կետից հետո պարբերությունները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ա) կետում դիտարկված՝ առաջին (սառը) մամլումով ստացված ձիթապտղի յուղը կարելի է տարբերել Բ եւ Գ կետերում դիտարկված յուղերից՝ Կոդեքս Ալիմենտարիուսի 33-1981 ստանդարտին համապատասխան:

Տվյալ ապրանքային դիրքի ձիթապտղի յուղը կարելի է տարբերել 1510 ապրանքային դիրքի ձիթապտղի յուղից՝ ըստ Բեյլեի բացասական ռեակցիայի:

Որոշ դեպքերում մնացորդային ձիթապտղի յուղի առկայությունը կարելի է սահմանել միայն չօճառացվող գտամասում տրիտերպենային դիոլները հետազոտելու դեպքում:

Տվյալ ապրանքային դիրքում **չեն ընդգրկվում** մնացորդային ձիթապտղի յուղը եւ ձիթապտղի յուղի հետ դրա խառնուրդները (**ապրանքային դիրք 1510**) կամ ձիթապտղի յուղից ստացվող վերաթերացված յուղը (ապրանքային դիրք 1516):»:

6) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1604 ապրանքային դիրքի պարզաբանումներում (ա) բացառությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«ա) ձկների ձկնկիթը, այսինքն՝ ձկների ձկնկիթները եւ սերմնագեղձերը, որոնք պատրաստված չեն կամ պահածոյացված չեն, կամ պատրաստված են կամ

պահածոյացված են միայն 03 խմբում նախատեսված եղանակներով՝ բացի սննդի մեջ անմիջական օգտագործման համար պիտանի այնպիսի ձկնկիրներից, ինչպիսիք են թառափազգիների ձկնկիրը կամ թառափազգիների ձկնկիր փոխարինիչները (**խումբ 03**):»

7) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 1704 ապրանքային դիրքի պարզաբանման 9-րդ կետի «գ» ենթակետից հետո ավելացնել 10-րդ կետը՝ հետևյալ խմբագրությամբ՝

«10) Բնական մեղրի հիմքով մթերքներ՝ շաքարից պատրաստված հրուշակեղենի տեսքով (օրինակ՝ «հավա»)»:

8) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2008 ապրանքային դիրքի պարզաբանումների վերջին պարբերությունից առաջ ավելացնել պարբերություն՝ հետևյալ խմբագրությամբ՝

«Տվյալ ապրանքային դիրքում չեն ընդգրկվում **1704 ապրանքային դիրքի** մրգերը, ընկույզները կամ բույսերի՝ սննդի մեջ օգտագործման համար պիտանի մյուս մասերը, որոնք վերամշակման միջոցով վերածվել են շաքարից պատրաստված հրուշակեղենի (այդ թվում՝ բնական մեղրի հիմքով)»:

9) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2501 ապրանքային դիրքի պարզաբանումների «բ» բացառությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«բ) սրվակներում զետեղված նատրիումի քլորիդի լուծույթներ՝ ներառյալ ծովի ջուրը եւ այլ եղանակով փաթեթավորված նատրիումի քլորիդը, որոնք ներկայացված են որպես դեղամիջոցներ (**խումբ 30**), ինչպես նաև հիգիենիկ նպատակներով մանրածախ առևտրի համար փաթեթավաճքներում բաժնեծրարված նատրիումի քլորիդի լուծույթներ՝ բացառությամբ բժշկական կամ դեղագործական միջոցների, մանրէազերծ կամ ոչ մանրէազերծ (**ապրանքային դիրք 3307**)»:

10) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2817 ապրանքային դիրքի պարզաբանումների Ա մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ա) մաս. **ՑԻՆԿԻ ՕՔՍԻԴ**

Ցինկի օքսիդ (ցինկի շպար) (ZnO) ստանում են օդի թթվածնով ցինկի

գուրռշիններն այրելու միջոցով: Ցինկի գուրռշիններն ստանում են մետաղական ցինկի շոգիացման միջոցով (անուղղակի կամ ֆրանսիական գործընթաց) կամ ածխածնով ցինկային օքսիդային հումքի, օրինակ՝ ցինկի հանքաքարերի (թրծած սֆալերիտ, կալամին՝ **ապրանքային դիրք 2608**) վերականգնման միջոցով (ուղղակի կամ ամերիկյան գործնթաց): Այս գործընթացներում օքսիդը հավաքվում է թելքային գոտիներով փոշեռսիչ խցիկներում կամ մաքրության մակարդակի բարձրացմամբ օքսիդների նստվածքների ձեւավորման խցիկներում:

Թաց գործընթացներում ցինկը ալկալահանում են ցինկի հումքից, այնուհետեւ նստեցնում են ցինկի հիդրօքսիդի կամ ցինկի կարբոնատի տեսքով: Նստվածքը ֆիլտրում են, լվանում, չորացնում եւ շիկացնում են՝ վերածելով ZnO-ի: Ցինկի օքսիդը մանր սպիտակ փոշի է, որը տաքացման ժամանակ դեղնում է: Այն ունի ամֆոտեր բնույթ, լուծվում է թթուներում եւ ալկալիներում:

Ցինկի օքսիդն օգտագործվում է հիմնականում արդյունաբերական ներկերում: Այն նաեւ օգտագործվում է ռետինի, կերամիկայի, ապակու, էլեկտրոնիկայի եւ դեղագործական նյութերի արտադրության ժամանակ: Ցինկի օքսիդը նաեւ պլաստմասսայի արտադրության ժամանակ օգտագործվող՝ անօրգանական եւ օրգանական աղերի լայն սպեկտրի արտադրության համար հումք է:

2841 ապրանքային դիրքի ցինկատները համապատասխանում են այդ ամֆոտեր օքսիդին:»

11) ԵՍՏՄ ՍՏԳ ԱԱ 2833 ապրանքային դիրքի պարզաբանումների (Ա) մասի 1-ին կետի «ա» ենթակետից հետո պարբերության մեջ՝

հանել «պոլիհալիտ» բառը.

«աստրախանիտ,» բառից հետո ավելացնել «ռեուսին,» բառը:

2. 2-րդ հատորում՝

1) ԵՍՏՄ ՍՏԳ ԱԱ 2909 ապրանքային դիրքի պարզաբանումների Դ մասի առաջին եւ երկրորդ պարբերությունները շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«ROOH, ROOR<sup>1</sup> եւ ROOR<sup>2</sup>OOR<sup>1</sup> տիպի միացությունները, որոնցում R-ը, R<sup>1</sup>-ը եւ R<sup>2</sup>-ը օրգանական ռադիկալներ են, եւ R-ն ու R<sup>1</sup>-ը կարող են լինել միանման կամ տարբեր:

**Օրինակներ են էթիլհիդրոպերօքսիդը, դիէթիլպերօքսիդը եւ 1Դ-դի(տրետ-բութիլպերօքսի)ցիկլոհեքսանը:».**

2) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 29-րդ խմբի VII ենթախմբի պարզաբանումների ընդհանուր դրույթներում՝

Գ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

#### **«Գ) ԹԹՈՒՆԵՐԻ ՊԵՐՕՔՍԻԴՆԵՐ**

Թթուների պերօքսիդները, որոնք հայտնի են նաեւ որպես դիացիլպերօքսիդներ, այնպիսի միացություններ են, որոնցում երկու ացիլային ռադիկալներ կապված են թթվածնի երկու ատոմով. դրանց ընդհանուր բանաձեւն ունի հետեւյալ տեսքը (R-CO-O-O-COR<sup>1</sup>), որում R-ը եւ R<sup>1</sup>-ը կարող են լինել միանման կամ տարբեր:»

Ե մասից հետո ավելացնել նոր Զ մաս՝ հետեւյալ բովանդակությամբ

#### **«Զ) ՊԵՐՕՔՍԻԵԹԵՐՆԵՐ**

Պերօքսիէթերների ընդհանուր բանաձեւն ունի հետեւյալ տեսքը (RCO-O-OR<sup>1</sup>), որում R-ը եւ R<sup>1</sup>-ը օրգանական ռադիկալներ են, որոնք կարող են լինել միանման կամ տարբեր:»

Զ եւ Է մասերը համարել համապատասխանաբար Է եւ Ը մասեր.

3) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2920 ապրանքային դիրքի պարզաբանումների Դ մասի 4-րդ կետից հետո ավելացնել 5-րդ կետ՝ հետեւյալ խմբագրությամբ՝

**«5) Տրետ-բութիլպերօքսի-2-էթիլհեքսիլկարբոնատ:»**

4) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2922 ապրանքային դիրքի պարզաբանումների ենթադիրքերի պարզաբանումները շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

**«Ենթադիրքերի պարզաբանումները՝**

**Ենթադիրքեր 2922 11-2922 50**

Տվյալ ենթադիրքերում դասակարգման համար օրգանական կամ անօրգանական թթվի պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խումբը դիտարկվում է որպես սպիրտային, ֆենոլային կամ թթվային ֆունկցիոնալ խումբ՝ կախված ամինախմբի նկատմամբ թթվածնակիր ֆունկցիոնալ խմբի դիրքից: Այս դեպքերում պետք է հաշվի առնվեն միայն այն թթվածնակիր ֆունկցիոնալ խմբերը, որոնք առկա են մոլեկուլի այն մասում, որը գտնվում է ամինային ֆունկցիոնալ խմբի եւ պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խմբին պատկանող թթվածնի ատոմի միջեւ: Ամինային ֆունկցիոնալ խումբ պարունակող սեզմենտը դիտարկվում է որպես «ելակետային»: Օրինակ՝ 3-(2-ամինոէթօքսի) պրոպիոնաթթու միացության մեջ էլակետային սեզմենտը ամինաէթանոլն է, եւ կարբօքսիլային խումբը դասակարգման նպատակներով հաշվի չի առնվում. տվյալ միացությունը, որպես ամինասպիրտի պարզ եթեր, ընդգրկվում է 2922 19 ենթադիրքում:

Եթե միացությունը պարունակում է երկու կամ ավելի պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խմբեր, ապա մոլեկուլը դասակարգման նպատակներով բաժանվում է մասերի՝ ըստ յուրաքանչյուր պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խմբի թթվածնի ատոմի, եւ հաշվի են առնվում միայն այն թթվածնակիր ֆունկցիոնալ խմբերը, որոնք գտնվում են այն նույն սեզմենտում, ինչ ամինային ֆունկցիոնալ խումբը:

Եթե միացությունն ունի երկու կամ ավելի ամինային ֆունկցիոնալ խմբեր, որոնք կապված են պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խմբի հետ, ապա այն ընդգրկվում է այն ենթադիրքում, որը ծածկագրերի աճման կարգով վերջինն է. կոնկրետ ենթադիրքը որոշվում է, հաշվի առնելով այն, թե արդյոք յուրաքանչյուր ամինային ֆունկցիոնալ խմբի նկատմամբ պարզ եթերային կամ բարդ եթերային ֆունկցիոնալ խումբը դիտարկվում է որպես սպիրտային,



ֆենոլային կամ թթվային ֆունկցիոնալ խումբ:»

5) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2930 ապրանքային դիրքի պարզաբանումների Ա մասի առաջին պարբերության մեջ «CS(OR)(SR')<sub>2</sub>, որտեղ R-ը օրգանական ռադիկալ է, եւ R'-ը մետաղ է» բառերը փոխարինել «(R-CO-S-SR')<sub>2</sub>, որտեղ R-ը օրգանական ռադիկալ է, եւ R'-ը մետաղ է»:

6) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2934 ապրանքային դիրքի պարզաբանումների մեջ՝  
Բ մասի 3-րդ կետից հետո ավելացնել 4-րդ կետ՝ հետեւյալ բովանդակությամբ՝  
«4) **Դեհիդրոթիո-ո-տոլուիդին**(4-(6-մեթիլ-1,3 -բենզոթիազոլ-2-իլ)անիլին):»  
հանել «Գ» մասի 5-րդ կետը:

6-8-րդ կետերը համարել համապատասխանաբար 5-7-րդ կետեր:

7) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2937 ապրանքային դիրքի պարզաբանումների 4«գ» բացառության մեջ «մոդուլատորներ եւ նեյրոմոդուլատորներ, ինչպիսիք են» բառերը փոխարինել «նեյրոտրանսմիտերներ եւ նեյրոմոդուլատորներ, ինչպիսին է սեպրանտոլոնը (INN) (ապրանքային դիրք 2914),» բառերով:

8) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2941 30 ենթադիրքի պարզաբանումների երկրորդ պարբերությունը «քլորտետրացիկլին (INN),» բառերից հետո լրացնել «երավացիկլին (INN),» բառերով:

9) ըստ դեղամիջոցի տեսակի այբբենական կարգով ներկայացված՝ դեղորայքային թմրամիջոցների եւ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ցանկի III մասը «3,4-(Մեթիլենդիօքսի) ֆենիլ-2-պրոպանոն» բառերից հետո լրացնել հետեւյալ դիրքերով՝

«Նորեֆեդրին	2939 44	14838-15-4
Նորեֆեդրինի հիդրոքլորիդ	2939 44	154-41-6»:

10) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 2909 ապրանքային դիրքի Դ կետը «29-րդ խմբի պարզաբանումներում նկարագրված որոշ քիմիական միացությունների

կառուցվածքային բանաձևերը» աղյուսակում «Կետոնների պերօքսիդներ (ցիկլոհեքսանոնի պերօքսիդ)» տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ տողով՝

			Պարզ էթերների պերօքսիդներ	
			1,1-դի(տրետ-բութիլպերօքսի)ցիկլոհեքսան	

11) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 3002 ապրանքային դիրքի պարզաբանումների մեջ՝

Գ մասի 1-ին կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Տվյալ ապրանքային դիրքում, ի թիվս այլ ապրանքների, ընդգրկվում են հետևյալ նյութերը, որոնք ստացվել են արյան հիման վրա (ներառյալ անոթային էնդոթելային բջիջները)՝ «նորմալ» շիճուկներ, մարդու նորմալ իմունոգլոբուլին, արյան թորամասեր եւ դրանց հատված տարբերակներ (մասեր) ֆերմենտային հասկություններով/ակտիվությամբ, պլազմա, տրոմբին, ֆիբրինոգեն, ֆիբրին եւ արյան մակարդելիության այլ գործոններ, տրոմբոմոդուլին, արյան գլոբուլիններ, շիճուկային գլոբուլիններ եւ հեմոգլոբին: Տվյալ կատեգորիայում ընդգրկվում են նաեւ ձեւափոխված տրոմբոմոդուլինները եւ ձեւափոխված հեմոգլոբինները, որոնք ստացվել են կենսատեխնոլոգիայի մեթոդներով, օրինակ՝ ստրոմբոմոդուլին ալֆան (INN) եւ տրոմբոմոդուլին ալֆան (INN), ինչպես նաեւ լայնական կապերով հեմոգլոբինները, ինչպիսիք են կրոսֆումարիլ հեմոգլոբինը (INN), գլուտամեր հեմոգլոբինը (INN) եւ ռաֆիմեր հեմոգլոբինը (INN):»:

Դ մասի 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) **Տոքսիններ** (թույներ), տոքսոիդներ, կրիպտոտոքսիններ, պրոտոքսիններ

(օրինակ՝ տոպասալիցին (INN)) եւ հակատոքսիններ:».



12) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 3307 ապրանքային դիրքի պարզաբանումների (V) մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 7-րդ կետով՝

«7) **Նատրիումի քլորիդի լուծույթներ**, որոնք հիգիենիկ նպատակներով բաժնեծրարված են մանրածախ վաճառքի համար փաթեթավածքներում՝ բացառությամբ բժշկական կամ դեղագործական միջոցների, մանրէազերծ կամ ոչ մանրէազերծ:».

13) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 3506 ապրանքային դիրքի պարզաբանումների Բ մասի 4-րդ կետը եւ ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 39-րդ խմբի պարզաբանումների ընդհանուր դրույթների ենթաբաժինների պարզաբանումից առաջ (բ) բացառությունը «մուներ» բառից հետո լրացնել «, բեւեկնախեժի բարդ եթերներ, **^վերափոխված** բնական դոճխեժ» բառերով.

14) ԵՍՏՄ ԱՏԳ ԱԱ 3909 ապրանքային դիրքի պարզաբանումների 1-ին կետի երրորդ պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

**«Պոլիմերիլենֆենիլիզոցիանատը** (որը հաճախ անվանվում է «խոնավ ՄԴԻ», «պոլիմերային ՄԴԻ» կամ «պոլիդիֆենիլմեթանդիզոցիանատ») հեղուկ է, որը տատանվում է անթափանց մուգ շագանակագույնից մինչեւ թափանցիկ բաց շագանակագույնի միջեւ, եւ որն ստացվում է անիլինի եւ ֆորմալդեհիդի փոխգործակցության միջոցով՝ գոյացնելով մեթիլենֆենիլամինի օլիգոմերների խառնուրդ, որն այնուհետեւ փոխազդում է ֆոսգենի հետ ու տաքացման ժամանակ առաջացնում է իզոցիանատային ֆունկցիոնալ խմբեր: Արդյունքը անիլինի եւ ֆորմալդեհիդի քիմիապես վերափոխված պոլիմերն է (քիմիապես վերափոխված ամինախեժ): Այն պարունակում է բուն ՄԴԻ եւ օլիգոմերների ՄԴԻ խառնուրդներ: Քիմիական կառուցվածքը տե՛ս ստորել՝



ՄԴԻ մոնոմերներ

ՄԴԻ օլիգոմերներ (n = 1-6)»:

### 3. 3-րդ հատորում՝

1) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 6110 ապրանքային դիրքի պարզաբանումների ենթադիրքերի պարզաբանումներից առաջ վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Տվյալ ապրանքային դիրքում նաեւ չեն ընդգրկվում 6101 կամ 6102 ապրանքային դիրքի տաքացված ժիլետները, որոնք վատ եղանակից պաշտպանվելու համար սովորաբար կրում են այլ հագուստի վրայից»:

2) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 6907 ապրանքային դիրքի պարզաբանումների մեջ՝

2-րդ կետից հետո ավելացնել 3-րդ կետ՝ հետևյալ բովանդակությամբ՝

«3) Տերակոտային երեսապատման տարրերը, որոնք օգտագործվում են շինարարական արդյունաբերության մեջ արտաքին կամ ներքին երեսապատման համար, տարբեր չափսերի, մոդուլային կառուցվածքով, որոնք, օրինակ՝ մետաղական սեղմակների օգնությամբ ամրացվում են հիմնական կոնստրուկցիայի պատերին ամրացված ուղղահայաց կամ հորիզոնական մետաղական պրոֆիլներին»:

3-րդ կետը համարել 4-րդ կետ:

4. 4-րդ հատորում ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7113 ապրանքային դիրքի

պարզաբանումների «ա» բացառության մեջ «2 Բ ծանոթագրության մեջ» բառերը փոխարինել «3 Բ ծանոթագրության մեջ» բառերով:

5. 5-րդ հատորում՝

1) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8541 ապրանքային դիրքի պարզաբանումների Ա մասի II կետում՝

«2»-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) Դաշտային տրանզիստորները, որոնք նաև հայտնի են որպես մետաղ-օքսիդ-կիսահաղորդիչներ (ՄՕԿ) կառուցվածքներ, կարող են ունենալ, կարող են եւ չունենալ անցումներ, բայց կախված են առկա երկու էլեկտրոդների միջև լիցքի ազատ կրողների՝ առաջացրած աղբատացումից (կամ հարստացումից): Դաշտային տրանզիստորում տրանզիստորային ազդեցությունն օգտագործում է լիցք կրողի միայն մեկ տիպ (այդ պատճառով էլ դրանք կոչվում են միաբեւեռ): Պարազիտային դիողը, որը ձեւավորվում է ՄՕԿ-տրանզիստորների բյուրեղում (որոնք նաև հայտնի են որպես ՄՕԿՊՏ), կարող է ինդուկտիվ բեռվածքի անջատման ժամանակ գործել որպես հակադարձ դիող: Չորս էլեկտրոդ ունեցող ՄՕԿՊՏ-ները կոչվում են տետրոդներ:»:

լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ կետով՝

«3) Մեկուսացված փականով երկբեւեռ տրանզիստորները (ՄՓԵՏ), որոնք երեք էլեկտրոդներով սարքեր են՝ փական եւ բեռնվածքային երկու էլեկտրոդներ (էմիտեր (դեկավարող) եւ կոլեկտոր (դեկավարվող)): Փականի եւ էմիտերի միջև համապատասխան լարում հաղորդելու միջոցով իրականացվում է հոսանքի կառավարում մեկ ուղղությամբ, այսինքն՝ այն կարելի է միացնել եւ անջատել: ՄՓԵՏ չիպերը կարող են դիողների հետ համատեղվել մեկ կորպուսում (ՄՓԵՏ բաղկացուցիչներ)՝ ՄՓԵՏ պաշտպանությունը եւ որպես տրանզիստոր դրա աշխատանքն ապահովելու համար:»:

2) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 8704 ապրանքային դիրքի պարզաբանումների «գ» բացառությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«գ) մոտոցիկլներ, մոտոռոլլերներ կամ շարժիչով հեծանիվներ, որոնք սարքավորված են բեռներ փոխադրելու համար, ինչպիսիք են ապրանքների առաքման համար մոտոցիկլները, եռանիվ հեծանիվները եւ այլ տրանսպորտային միջոցներ, որոնք չունեն տվյալ ապրանքային դիրքի (ապրանքային դիրք 8711) եռանիվ տրանսպորտային միջոցների հատկանիշներ»:

3) ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 9403 ապրանքային դիրքի պարզաբանումների 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) Մասնավոր բնակտարածքների, հյուրանոցների եւ այլ տարածքների համար, ինչպիսիք են՝ ապակեպատված պահարանները, սպիտակեղենի սնդուկները, հացամանները, կոմոդները, բարձր կոմոդները. պատվանդանները (հատակի տակդիրները), բույսերի համար տակդիրները. գուգարանի սեղանները. գրասեղանների կարճապահարանները. զգեստապահարանները, սպիտակեղենի մամլիչները. նախասենյակի համար տակդիրները, հովանոցների համար տակդիրները. սպասքապահարանները (սերվանտները), խոհանոցի սպասքի պահարանները, բուֆետները. ապրանքների համար արկղերը. մահճակալին կից սեղանները. մահճակալները (ներառյալ զգեստապահարանով մահճակալները, ծալովի մահճակալները, արշավային մահճակալները, մանկական մահճակալները եւ այլն). կարի համար նախատեսված սեղանները. նստարանները եւ ոտքերի համար նստարանները (ճոճվող կամ չճոճվող), որոնք նախատեսված են ոտքերը դնելու համար, բուխարիների շիրմաները. միջանցուկ քամուց պաշտպանվելու համար շիրմաները. տակդիրներով մոխրամանները. նոտաների պահպանման համար արկղերով պահարանները, նոտակալները. մանկական ճաղափակոցները. սնունդը բաժանելու համար սայլակները (տաքացման համար սալօջախով կամ առանց դրա)»: